Հաստատում եմ՝

«Վարդանիձորի միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ-ի տնօրենի պ. ____________

/ստորագրություն/

«01» ____09____ 2022թ.

/ամիս, ամսաթիվ/

# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

## 2022 - 2023

## ուսումնական տարի

Դասղեկ՝ Հայկ Հայրապետյան

Դասարաններ՝ X, XII

# ԲԱԶՄԱՀԱՄԱԿԱԶՄ ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բազմահամակազմ դասարանը բաղկացած է 3 (երեք) հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտներն ունեն բավարար ընդունակություններ: Դասարանի աշակերտները համերաշխ են և համախմբված, բարյացակամ են միմյանց նկատմամբ: Միրով են հաճախում դպրոց: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

| Հ/հ | Աշակերտի ազգանուն, անուն, հայրանուն | Դպրոց ընդ. տարեթ. | Ծննդյան թիվը | Ամիսը | Օրը | Սեռը | Հասցեն | Հեռախոսի համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գրիգորյան Էրիկ Վլադիսլավի | 2011 | 2005 | 09 | 19 | ար. | գ. Վարդանիձոր, 3-րդ փ., 2-րդ նրբ., տ. 2 | 093 31 56 76 |
| 2 | Մարտիրոսյան Դավիթ Հովհաննեսի | 2011 | 2005 | 07 | 11 | ար. | գ. Թխկուտ, Հրապարակ 2 | 094 74 75 21 |
| 3 | Առաքելյան Գուրգեն Էդգարի | 2013 | 2007 | 10 | 15 | ար. | գ. Վարդանիձոր, 3-րդ փ., տ. 12 | 077 55 06 76 |

## ԾՆՈՂԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

**Նախագահ՝** Գյոզալյան Միլանա Վաչագանի

**անդամ՝** Սողոմոնյան Մարգարիտա Ժորայի

Առաքելյան Միրանուշ Սուրիկի

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Աշխատանք տանել դասարանը անհրաժեշտ նյութերով կահավորելու ուղղությամբ:

2. Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն:

3. Ամենօրյա հսկողություն սահմանել յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ (հաճախում, առաջադիմություն, կարգապահություն):

4. Շաբաթը մեկ անգամ անցկացնել դաստիարակչական ժամ և այն ծառայեցնել աշակերտի բազմակողմանի դաստիարակությանը:

5. Կիսամյակը երկու անգամ հրավիրել դասարանական-ծնողական ժողով: Ծնողներին մասնակից դարձնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը:

6. Կազմակերպել էքսկուրսիաներ:

# ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հոգևոր դաստիարակություն

Կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Հոգևոր դաստիարակությունը կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, մշակութային ժառանգությունը փոխանցելու, բարոյական արժեքներ սերմանելու համար:

2. Գեղագիտական դաստիարակություն

Այն պետք է ուղղել կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի ձևավորմանը:

3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Այս դաստիարակությունը ենթադրում է նպատակային աշխատանք՝ ուղղված հայոց բանակի նկատմամբ սիրո և հարգանքի ձևավորմանը: Սովորողները պետք է լավ հասկանան հայոց բանակի պատմական կոչումն ու առաքելությունը՝ որպես հայրենիքի անվտանգության ապահովման գլխավոր երաշխավորի:

4. Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը կարևոր դեր է խաղում անձի համակողմանի զարգացման գործում: Ֆիզիկական զարգացումը մարդու համար ստեղծում է պայմաններ մտավոր լիարժեք աշխատանքի համար:

5. Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքը հասարակության նյութական և հոգևոր հարստության հիմնական աղբյուրն է: Այս դաստիարակությունը օգտակար է աշակերտների քաղաքացիական հասունության, մտավոր և բարոյական ձևավորման, ինչպես նաև ֆիզիկական զարգացման համար:

6. Բնապահպանական դաստիարակություն

Մեր օրերում շատ կարևոր է այս դաստիարակությունը դպրոցում: Օգտագործելով դպրոցի ներուժը նպաստել մեր մոլորակի կայունացման նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը:

7. Դպրոց-ընտանիք կապը

Դպրոց - ընտանիք համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել աշակերտի մեջ բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքային ուսուցումն ու մասնագիտական կողմնորոշումը:

# ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնա-կան շաբաթներ | Դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը |
|---|---|---|
| 1-ին | Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում | սեպտեմբերի 2 |
| 2-րդ | Դասարանական կոլեկտիվի ձևավորում | սեպտեմբերի 9 |
| 3-րդ | Քննարկում նվիրված «Անկախության տոն»-ին | սեպտեմբերի 16 |
| 4-րդ | ՀՀ պետական խորհրդանիշները | սեպտեմբերի 23 |
| 5-րդ | Հայրենիքը սիրել նշանակում է ... | սեպտեմբերի 30 |
| 6-րդ | «Հայաստան» ասելիս աչքիս առաջ են գալիս ... | հոկտեմբերի 7 |
| 7-րդ | Աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում | հոկտեմբերի 14 |
| 8-րդ | Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում | հոկտեմբերի 21 |
| 9-րդ | Վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում | նոյեմբերի 4 |
| 10-րդ | Մեդիագրագիտությանն ուղղված զրույց | նոյեմբերի 11 |
| 11-րդ | Աշակերտների ինքնուրույնության խթանում | նոյեմբերի 18 |
| 12-րդ | Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում | նոյեմբերի 25 |
| 13-րդ | Ինչպես պաշտպանվել աղետներից | դեկտեմբերի 2 |
| 14-րդ | Քննարկում նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակի օրվան | դեկտեմբերի 9 |
| 15-րդ | Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում | դեկտեմբերի 16 |
| 16-րդ | Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում | դեկտեմբերի 23 |
| 17-րդ | Աշակերտների միջև հանդուրժող վերաբերմունքի ձևավորում | հունվարի 13 |
| 18-րդ | Եթե հայ ես, ուրեմն՝ զինվոր ես | հունվարի |

| | | |
|---|---|---|
| | | 20 |
| 19-րդ | Քննարկում նվիրված «Բանակի օրվան» | հունվարի 27 |
| 20-րդ | Նպաստել հայրենաչանաչության բարձրացմանը: Արժևորել անցյալի ձեռքբերումներն ու հաղթանակները | փետրվարի 3 |
| 21-րդ | Արտագաղթը չարիք է | փետրվարի 10 |
| 22-րդ | Անաղարտ պահենք մայրենին | փետրվարի 17 |
| 23-րդ | Հայոց պատմության հերոսական էջերը | փետրվարի 24 |
| 24-րդ | Հայաստանը երեկ, այսօր, վաղը | մարտի 3 |
| 25-րդ | «Ազգ և պետություն» թեմայով քննարկում | մարտի 10 |
| 26-րդ | Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը | մարտի 17 |
| 27-րդ | Հայաստանի այն վայրերը որտեղ կուզեի լինել | մարտի 24 |
| 28-րդ | Ջրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ | ապրիլի 7 |
| 29-րդ | Հայ վրիժառուները | ապրիլի 14 |
| 30-րդ | Քննարկում նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան | ապրիլի 21 |
| 31-րդ | Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը | ապրիլի 28 |
| 32-րդ | Քննարկում նվիրված «Հաղթանակի և խաղաղության տոնին» | մայիսի 5 |
| 33-րդ | Արցախյան ազատամարտի հերոսները | մայիսի 12 |
| 34-րդ | Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում | մայիսի 19 |
| 35-րդ | Հրաժեշտ դպրոցին | մայիսի 26 |